

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Դեկտեմբեր	2021 թ.		Բ	6519872868
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
13	Դեկտեմբեր	2021 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Գնման ամսաթիվ	[6] Համար	
			19 Հունվար, 2021 թ.	Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ 2ԳՂ-4-21	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
Արձանագրություն 20					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	2	2	7	5	6	8	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ՍՈՖՅԱ ՄԵՐՈԲՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570064545140100					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍՆՆՈՎՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր		Համար					
			Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	16.5	1000		16500
2	Անգլերեն-հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	1	1650		1650
3	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	2	1000		2000
4	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	21.5	1000		21500
5	Հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	Էջ	2.5	1650		4125
6	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	4.5	1000		4500
7	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	9.5	1000		9500
8	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	9.5	1000		9500
Ընդամենը						69275

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

Ծառայություն (աշխատանք) ստացող

GRIGORYAN SUSANNA 7403690397

13/12/2021 11:22:35

15/12/2021 11:31:51

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«15» սեպտեմբերի 2021թ.

ք. Արուվյան

Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Հ.Մովսեսյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 60352321 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Հայկազ Աղասիի Համազարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Արուվյանի քննչական բաժնում քննված թիվ 60352321 քրեական գործի նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, 2021 թվականի մարտի 2-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, Հայկազ Աղասի Համազարյանը Կոտայքի մարզի Գառնի գյուղի Գեղարդի խճուղում վարելով «ՎԱՋ 21120» մակնիշի 35 АО 927 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, թույլ է տվել ՃԵԿ-ի 67-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ տեխնիկական տեսակետից հնարավորություն ունենալով կանխել տվյալ վրաերթի առաջացումը նախապես չի ընտրել երթևեկության համապատասխան անվտանգ ուժիմ և ժամանակին կատարած արգելակումով չի դանդաղեցրել ավտոմոբիլի արագությունը՝ ընդհուպ մինչև տրանսպորտային միջոցը կանգնեցնելը կամ անվտանգ երթևեկության իրականացնելու միջոցով չի շրջանցել հետիոտնին, որի արդյունքում իր վարած ավտոմոբիլի դիմային հատվածով վրաերթի է ենթարկել Սերոբ Արամայիսի Մարտիրոսյանին, դրանով իսկ պայմանավորել տվյալ վրաերթի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից և այդ կերպ անզգուշությամբ առաջացրել Սերոբ Մարտիրոսյանի մահը և թողնելով ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը դիմել է փախուստի:

Վերոգրյալ արարքը կատարելու համար Հայկազ Աղասի Համազարյանին 30.08.2021 թվականին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2021 թվականի սեպտեմբերի 01-ին թիվ 60352321 քրեական գործով կազմվել է մեղադրական եզրակացությունը և քրեական գործի հետ ուղարկվել Կոտայքի մարզի դատախազություն:

Նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 06-ին հաստատվել է թիվ 60352321 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի կարգով քրեական գործն ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Նախաքննությամբ պարզվել է, որ թիվ 60352321 քրեական գործով մեղադրյալ Հայկազ Համազարյանը չի տիրապետում հայերենին, այլ տիրապետում է ռուսերենին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:


Հաշվի առնելով, որ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 04-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ, 277-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. թիվ 60352321 քրեական գործով քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալ Հայկազ Համազարյանին մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների ռուսերեն լեզվով հաստատված թարգմանությունները հանձնելու համար, դրանց ռուսերեն լեզվի թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին /անձնագիր՝ AS0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ./ և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից անհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատարկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


Կոտայքի մարզի դատախազության
ավագ դատախազ



Հ.Մովսեսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն ու պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



« 15 » սեպտեմբերի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

03.11.2021թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով Ջոյա Պռեիդայի վերաբերյալ Մոլդովայի Հանրապետությունից ստացված հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

14.09.2021թ.-ին Մոլդովայի Հանրապետության գլխավոր դատախազությունից ստացվել է Ջոյա Պռեիդայի հանձնման միջնորդության վերաբերյալ ՄՀ գլխավոր դատախազության 18.08.2021թ. գրությունը՝ անգլերեն լեզվով:


Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ՄԱԲԻՆԵ ՄԵՐՈԲՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ջոյա Պռեիդայի հանձնման միջնորդության վերաբերյալ ՄՀ գլխավոր դատախազության 18.08.2021թ. գրության հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱԲԻՆԵ ՄԵՐՈԲՅԱՆԸ (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0470399, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ՊՍ համալսարանի դիպլոմ՝ տրված 21.05.2012թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց

քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դժնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:


ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական
համագործակցության վարչության պետի տեղակալ



L. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ
Մ.Վ. Սերոբյան



«03» 11 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

04.11.2021թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ Ջ.Ն. ՊՌԵԻԴԱՅԻ իրավունքն ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-223-18 վարույթի կյուրերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Սուլդովայի Հանրապետության (ՄՀ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ՋՈՅԱ ՆԻԿՈԼԱԵԻ ՊՌԵԻԴԱՅԻ (ЗОЯ ПРЕЙДА, НИКОЛАЕ) 02.11.2021թ. հայտնաբերվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ մարմինների կողմից և այդ մասին հայտնվել է ՄՀ իրավասու մարմիններին:

04.11.2021թ. որոշում է կայացվել Ջ.Ն. ՊՌԵԻԴԱՅԻ հանձնումը ՄՀ իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Ջ.Ն. ՊՌԵԻԴԱՅԻ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ Ջ.Ն. ՊՌԵԻԴԱՅԻ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնապահությունը կսակած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ջ.Ն. ՊՌԵԻԴԱՅԻ հանձնման թույլատվության վերաբերյալ որոշման ոուսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ (ՀՀ քաղաքացու անձնագիր AS0538862,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

« 16 » նոյեմբերի 2021թ.

քԶԳյումրի

Շիրակի կայազորի զինվորական դատախազի տեղակալ Հ.Հ.Ավետիսյանս, քննարկելով դատավարական ղեկավարման ներքո գտնվող թիվ 90357419 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քաղաքացի Շիրակի մարզի Գյումրի քաղաքի բնակիչ, 17.10.1998 թվականին ծնված Կարեն Վիրաբի Մարգարյանը 2014 թվականի փետրվարի 28-ին կցագրվել է ՀՀ ՊՆ Շիրակի մարզի զինկոմիսարիատում, ապա, հասնելով զորակոչային տարիքի՝ մինչև 15.06.2019 թվականը ուսման նպատակով օգտվել է տարկետման իրավունքից, որից հետո պարտավոր լինելով 2019 թվականի ամառային զորակոչին ներկայանալ Շիրակի զինկոմիսարիատ, չի ներկայացել և ժամկետային զինվորական ծառայությունից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության պայմաններում խուսափել է ժամկետային զինվորական ծառայության 2019թ. ամառային զորակոչից:

Դեպքի առթիվ 2019 թվականի օգոստոսի 23-ին ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնում որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով թիվ 90357419 քրեական գործը հարուցելու և վարույթ ընդունելու մասին:

21.10.2019թ. որոշում է կայացվել Կարեն Վիրաբի Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

21.10.2019թ. որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 4-րդ մասի պահանջներով քրեական գործով վարույթը կասեցնելու մասին

2021 թվականի նոյեմբերի 01-ին Շիրակի կայազորի զինվորական դատախազությունից ստացվել է թիվ 71/2292ք-21 գրությունը, համաձայն որի՝ 2021 թվականի հոկտեմբերի 18-ին Բելառուսի Հանրապետությունում ձերբակալվել է թիվ 90357419 քրեական գործով մեղադրյալ Կարեն Վիրաբի Մարգարյանը :

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է փաստաթղթերի հայերեն լեզվից ռուսերեն լեզու թարգմանությունը, իսկ Սոֆյա Վազգենի Սերոբյանը ունի համապատասխան կրթություն և որակավորում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Թիվ 90357419 քրեական գործով, որպես թարգմանիչ ներգրավել Սոֆյա Վազգենի Սերոբյանին՝ անհրաժեշտ փաստաթղթերը հայերեն լեզվից ռուսերեն լեզու թարգմանելու համար:



2. Սոֆյա Վազգենի Սերոբյանին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՇԻՐԱԿԻ ԿԱՅԱՋՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԴԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱԼ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝



Հ.Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծանոթացա որոշմանը՝



«16» հուլիսի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

05.11.2021թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ Դ.Յ.Լ. ԹԱՆԻ իրավունքն ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-960-21 վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԴԵՅՎԻԴ ՅՈՐԺ ԼՈՒԵՆ ԹԱՆԸ 17.08.2021թ. հայտնաբերվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ մարմինների կողմից և այդ մասին հայտնվել է ԱՄՆ իրավասու մարմիններին:

05.11.2021թ. որոշում է կայացվել Դ.Յ.Լ. ԹԱՆԻ հանձնումը ԱՄՆ իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Դ.Յ.Լ. ԹԱՆԻ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ Դ.Յ.Լ. ԹԱՆԸ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ ՄԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Դ.Յ.Լ. ԹԱՆԻ հանձնման թույլատրության վերաբերյալ որոշման անգլերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0470399,

որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ՊՄ համալսարանի դիպլոմ ABN°140214՝ տրված 21.05.2012թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:


2. Թարգմանչին նախագգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գա թծով թարգմանչի կ ողմից ա կնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատնազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դժնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

ՀՀ գլխավոր դատասխագության միջազգային-իրավական
համագործակցության վարչության պետի տեղակալ

 Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախագգուշացված եմ:

Թարգմանիչ՝
Մ. Սերոբյան



«05» 11 2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ճանաչելու մասին

«10» նոյեմբերի 2021թ.

ք. Արտաշատ

Արարատի մարզի դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Գմանասերյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 27180521 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Ալեքսեյ Ռոմիկի Միրզոնի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով


ՊԱՐԶԵՑԻ՝

Թիվ 27180521 քրեական գործով մեղադրական եզրակացությունը կազմվել է 2021թ. հոկտեմբերի 28-ին և քրեական գործի հետ ուղարկվել Արարատի մարզի դատախազություն: Քրեական գործի նյութերն ուսումնասիրելով պարզեցի, որ սույն քրեական գործով մեղադրյալ Ալեքսեյ Ռոմիկի Միրզոնը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին և տիրապետում է միայն ռուսերեն գրավոր լեզվին:


Սկստի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն և քրեական դատավարությունում յուրաքանչյուր ոք բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները և հաշվի առնելով, որ Ալեքսեյ Միրզոնը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 52-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի ՝

1. Թիվ 27180521 քրեական գործով որպես թարգմանիչ ճանաչել Ա/Ձ Սոֆյա Սերոբյան թարգմանչական գրասենյակի ռուսերեն լեզվի թարգմանիչ Սոֆյա Վազգենի Սերոբյանին / ծնված 14.01.1989թ., բնակվում է ք. Երևան, Հովհաննիսյան թաղ., 28 շենք, 22 բն./:
2. Սոֆյա Սերոբյանին նախազգուշացնել սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Մարզի դատախազության դատախազ՝
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝  Գ. Գմանասերյան

Որոշման մասին ինձ հայտնվել է,


Ս. Սերոբյան
10 նոյեմբերի 2021

Թարգմանչին բացատրվում է, որ ՀՀ քր.դատ.օր-ի 83-րդ հոդվածի համաձայն իրավունք ունի.

1) թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց.

2) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

3) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

Թարգմանիչը պարտավոր է՝

1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանիչի՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին.

4) թարգմանությունն ապահովելու համար պնդաբեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

5) թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին.

6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին.

7) դատական նիստի ընթացքում պահպանել կարգուկանոն.

8) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը.

9) առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:


5. Թարգմանիչի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

6. Թարգմանիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Թարգմանիչ՝

Մարզի դատախազության դատախազ՝

արդարադատության երրորդ դասի խորհրդական՝



Ս.Ստեփոյան

Գ.Մանասերյան

10. Եպրիլի, 2021

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

15 նոյեմբերի 2021թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՌԴ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերի մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող Էդիկ Պետրոսյանին հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԴ/0798/06/20 որոշումը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարությանն առընթեր ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի աշխատակիցները ստացված օպերատիվ տեղեկությունները համատեղ իրացնելու արդյունքում, 2021 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 16²⁰-ին, Երևան քաղաքի Րաֆֆու փողոցի 27-րդ շենքի 11-րդ բնակարանում հայտնաբերել և բաժին են բերման ենթարկել ՌԴ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերի մեղադրանքով (նախնական համաձայնությամբ մի խումբ անձանց հետ բռնությամբ շորթում), ՌԴ ներքին գործերի նախարարության Ալտայի երկրամասի ՆԳ վարչության, Բառնաուլ քաղաքի ՆԳ բաժնի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 12-ից հետախուզման մեջ գտնվող (որպես խափանման միջոց է ընտրված կալանավորում) ազգությամբ հայ, ՌԴ քաղաքացի Էդիկ Սուրենի Պետրոսյանին, ով նույն օրը՝ ժամը 19⁰⁰-ին ձերբակալվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի օգոստոսի 8-ի թիվ ԵԴ/0710/06/21 որոշմամբ քավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը Էդիկ Պետրոսյանի նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

2021 թվականի սեպտեմբերի 7-ին ստացվել է ՌԴ իրավասու մարմինների միջնորդությունը՝ Էդիկ Պետրոսյանի այդ երկրի քրեական օրենսգրքի ՌԴ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «գ» կետերով քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին միջնորդությունը:

2021 թվականի սեպտեմբերի 8-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան Էդիկ Պետրոսյանի հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ ԵԴ/0798/06/20 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը:

Նկատի ունենալով, որ 2021 թվականի նոյեմբերի 13-ին լրանում է Էդիկ Պետրոսյանին կալանքի տակ պահելու ժամկետը, մինչդեռ անհրաժեշտ է ժամանակ վերջինիս կարգավիճակը հստակեցնելու, հանձնման մասին միջնորդությունը քննարկելու և ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան որոշում կայացնելու համար, ապա ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վերջինիս և նրա շահերի պաշտպանների կողմից հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի որոշման հետագա բողոքարկման իրավունքը, որից հետո անդրադառնալ ՌԴ իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին, 2021 թվականի հոկտեմբերի 27-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ Էդիկ Պետրոսյանին հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԴ/0798/06/20 որոշմամբ մասնակի բավարարվել է նաև Էդիկ Պետրոսյանին հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ Էդիկ Պետրոսյանը չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Էդիկ Պետրոսյանին հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԴ/0798/06/20 որոշումը գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13. 05. 2019թ. , 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27. 12. 2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Սկսած սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Վահագն

15 Հուլիսի 2021 թ.

Վահագն Վերջյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

12.11.2021թ.

ք.Երևան

«Վ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ.Մելիքյանս, ուսումնասիրելով Մամիկոն Ալեքսանյանի վերաբերյալ «Վ գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

12.11.2021թ. «Վ գլխավոր դատախազությունում ստացվել է Մամիկոն Ալեքսանյանին հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.11.2021թ. որոշումը, որը հայարեն լեզվով է:

Համաձայն «Վ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ «Վ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել ռուսերեն, իսկ ՍԵՐՈՐՔԱՆ ՍՈՖՅԱՆ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են «Վ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արուսահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով «Վ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Մամիկոն Ալեքսանյանին հանձնման համար կալանավորելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշման ռուսերեն թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԵՐՈՐՔԱՆ ՍՈՖՅԱՆԻՆ (անձնագիր AS0538862, տեղեկանք տրված «Վ Ան 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել «Վ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դատախազ




Գ. Մելիքյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ հրավումքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Սերոբյան Սոֆյա



12» 11. 2021թ.